

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒԵՄԻ 22-ԻՆ ՄԱԴՐԻԴՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հոկտեմբերի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հուլիսի 22-ին Մադրիդում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 03.10.2011թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պերի րեղակալ Ա. Մարությանի գրավոր բացատրությունը, հերազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դարարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Նայասրանի Նանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ օդային րրանապորտի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Նամաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի հուլիսի 22-ին՝ Մադրիդում:

Նամաձայնագրի անբաժանելի մասն է կազմում Նամաձայնագրի՝ Նայասրանի Նանրապետության եւ Իսպանիայի Թագավորության կողմից նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիների մասին հավելվածը:

2. Նամաձայնագրի նպարակն է երկու երկրների միջեւ կանոնավոր օդային հաղորդակցությունների կարգավորումը եւ րնրեսական ու մշակութային կապերի հերագա գարգացումը:

3. Սույն Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը պարրավորվում է, մասնավորապես՝

- րրամադրել Իսպանիայի Թագավորությանը Նամաձայնագրում նախապեսված իրավունքները՝ Նավելվածում սահմանված երթուղիներով կանոնավոր միջազգային օդային հաղորդակցություններ հասարարելու նպարակով (հոդվ. 2, կեր 1),

- սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություն շահագործելու առնչությամբ երաշխավորել իսպանական կողմի նշանակված ավիաընկերությունների՝ ՆՆ րարածքի վրայով առանց վայրէջքի թռիչքներ իրականացնելու, ոչ առեւրրային նպարակներով ՆՆ րարածքում վայրէջքներ կարարելու, ինչպես նաեւ ՆՆ րարածքում՝ Նավելվածում սահմանված կերրերում կանգառներ կարարելու իրավունքները՝ առանձին կամ համակցված կերպով միջազգային փոխադրումներում ուղեւորների, բեռի եւ փոսրի օդանավ վերցնելու կամ իջեցնելու նպարակով (հոդվ. 2, կեր 2 ),

- միջազգային օդային հաղորդակցություններում ներգրավված օդանավի՝ ՆՆ-ի րարածք մուրք գործելուն, րարածքից մեկնելուն կամ այդ րարածքում գրնվելիս իսպանական կողմի նշանակված ավիաընկերության օդանավերի

նկատմամբ կիրառել նման օդանավի շահագործմանը վերաբերող ՏՏ օրենսդրությունը (հոդվ. 5, կետ 1 ),

- վավեր ճանաչել Նամաձայնագրի հավելվածում սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով իսպանական կողմի կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան տրված կամ վավեր ճանաչված դեռեւս ուժի մեջ գտնվող թռիչքային պիլոտաժի սերտիֆիկատները, օդանավ շահագործողի սերտիֆիկատներն ու լիցենզիաները՝ պայմանով, որ այն պահանջները, որոնց ներքո տրվել կամ վավեր են ճանաչվել նման սերտիֆիկատներն ու լիցենզիաները, համապատասխանում են Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Չիկագոյի 1944թ. կոնվենցիայում սահմանված նվազագույն չափանիշներին կամ գերազանցում են դրանք (հոդվ. 6, կետ 1 ),

- իսպանական կողմի հարցման դեպքում տրամադրել անհրաժեշտ ողջ աջակցությունը՝ կանխելու համար օդանավերի ապօրինի գավթման գործողությունները եւ օդանավերի, դրանց ուղեւորների եւ անձնակազմի, օդանավակայանների եւ օդագնացության միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողություններ, ինչպես նաեւ քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք (հոդվ. 8, կետ 2 ),

- իսպանական կողմի ցանկացած նշանակված ավիաընկերությունների միջազգային օդային հաղորդակցություններում շահագործվող օդանավերը, ինչպես նաեւ դրանց սովորական սարքավորումները, վառելիքի ու քսայուղերի պաշարները եւ նման օդանավերում գտնվող պաշարները, ՏՏ-ի փարածք ժամանելիս ազատել բոլոր մաքսատուրքերից եւ այլ տուրքերից ու հարկերից՝ պայմանով, որ այդպիսի սարքավորումները եւ պաշարները մնան օդանավում մինչեւ դրանք վերաարտահանելը (հոդվ. 10, կետ 1 ),

- իսպանական կողմի նշանակված ավիաընկերություններին տրամադրել Նամաձայնագրում սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման արդար եւ հավասար հնարավորություն (հոդվ. 12, կետ 1),

- իսպանական կողմի նշանակված ավիաընկերություններին թույլատրել ՏՏ-ի փարածքում պահելու իրենց գրասենյակները եւ ներկայացուցությունները, ինչպես նաեւ իրենց առեւտրային, գործառնական եւ տեխնիկական անձնակազմը, որն անհրաժեշտ է համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման մասով (հոդվ. 14, կետ 1 ):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հուլիսի 22-ին Մադրիդում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 հոկտեմբերի 2011 թվականի  
ՍԴՈ- 995